ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 մարտի 2024թ. թիվ 216

Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԵՎ Գ.ՏՈՆՈՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով գործուղման առաջադրանքները՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետներ Ռուբեն Մխիթարյանին և Գարիկ Տոնոյանին ս/թ մարտի 19-ին մեկ օրով գործուղել ք.Երևան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հարցազրույցի փուլին որպես հանձնաժողովի անդամներ ներկա գտնվելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

18/03/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. մարտի 18
ք.Վանաձոր